

338.14

4-15

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академии Наук
СССР



Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆԻ
ՃԱՌԸ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ
ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ԿՈՒՆՅՐԱՍԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԲՈՍՏՈՎ-ԳՈՆ 1933

Ընկերներ, յես վախենում եմ ձեզ վող-
ջուհեցու, վորովհետև անցյալ տարի կոլտն-
տեսականների ձեր յերկրային համագումար-
ում իրար շատ վողջուհեցինք. բայց հետո,
անկեղծն ասած, բանից դուրս յեկավ, վոր
համագումարը խաբեց թէ իրեն և թէ ինձ,
իսկ յես—կառավարությանը:

Դատելով այդ համագումարում արտա-
սանված ճառերից և տրված ուսպորտներից,
խոստումներից ու յերդումներից, ինձ թվաց,
վոր Հյուսիսային Կովկասի կոլտնտեսական-
ներն իրենց կաշվից դուրս կզան, բայց
կվերցնեն հողից այն ամենը, ինչ հնարավոր
է վերցնել: Յե՛վ յերբ յես համագումարից
Մոսկվա վերադարձա, յես վստահաբար աս-
ացի. Հյուսիսային Կովկասը կկատարի իր
պարտավորությունները յերկրի հանդեպ: Սա-
կայն դա սխալ դուրս յեկավ: Իհարկե, վոչ
մի դեպքում չի կարելի ասել, վոր համա-

գումարն ինձ զիտակցորեն խաբեց, կարելի
չէ գյուղացու նման ասել, վոր «մենք բո-
լորս աստծու հրամանով ենք շարժվում» և
բերքը զգալիորեն մեղանից չէ վոր կախում
ունի, բայց համենայն դեպս բանից դուրս
յեկավ, վոր մենք ավելի շատ խոսում ենք,
քան թե գործում: Յե՛վ այս բանը, ընկեր-
ներ, պետք է խոստովանել և հիշել:

Թեև յես չեմ սիրում խրատական ճառ
ասել,—դրանից ել ձանձրալի վոչինչ չկա,—
սակայն, այսօր ստիպված եմ իմ ճառում
մտցնել խրատական մաս. յես կարծում եմ
վոր համագումարը համեմատաբար քիչ ու-
շազրուցյուն դարձրեց այն թերություննե-
րին, բացերին և խոշոր սխալներին, վորոնք
տեղի ունեցան մեր աշխատանքում անցյալ
տարի: Փաստ է, վոր տարին վատ անցավ:
Յե՛վ վաստ է, վոր տարվա հիմար անցնե-
լու պատճառը միայն կլիմայական պայ-
մանները չեյին...

Այստեղ ինձանից առաջ խոսեց ընկեր
Սարաֆանովը: Իուք նրան բոլորդ ել լսե-
ցիք: Նրա խոսքերից կարելի յէ յեզրակաց-
նել, վոր նա պատկանում է այնպիսի մարդ-
կանց թվին, վորոնք ավելի շատ գործ են
անում, քան խոսում: Նա բերեց իր և հա-

16 MAY 2013

30.566

րևան կոլտնտեսությունների աշխատանքի սրինակներ: Նրա կոլտնտեսության մեջ, ինչպես ինքն է ասում, արդի անբերրի տարում իրենք մի հեկտարից հավաքեցին յոթ գնետներ ցորեն: Յոթը բազմապատկածվեցով, հավասար է քառասուն և յերկու փթի: Այս փիվը մոտ է վողջ Սորճրդային Միության միջին բերքին: Նրանց մոտ յեզիպտացորենի բերքը լավ է, այնինչ հարևան կոլտնտեսության դաշտերում յեզիպտացորենը բոլորովին չբանեց, իսկ ցորենը նրանք մի հեկտարից կալսեցին միայն մի գնետներ: Սակայն միթե պարզ չե, վոր հարևան կոլտնտեսությունների կլիմայական պայմանները, հողի վորակը նույնն են: Սա նշանակում է վոր մեկի աստս բեբը յեվ մյուսի անբերիությունը կախում ունեյին մարդկանցից, կոլցնեստոբյան յեկավարությունից յեվ ինարկե, զգալի չափով նեց-իեցից—կոլցնեստականցից: Յեվ յերբ մենք տեսնում ենք, վոր մի քանի կոլտնտեսություններում տարին բերքառատ է յեղել, իսկ հարևան կոլտնտեսություններում—անբերրի, ապա դա ապացուցում է, վոր Հյուսիսային Կովկասում չի յեղել այն իրանդավառությունը, այն մասնայական օճներգիան, գյուղացու

այն բուռն ցանկությունը հողը լրիվ ոգտագործելու վերաբերյալ, վորոնք անհրաժեշտ են հողից շատ բերք ստանալու համար:

Այժմ մենք պետք է ուղղակի և անաչառ կերպով բաց անենք այն պատկերը, վորն առաջ յեկավ Հյուսիսային Կովկասի ճեղք-վածքի հետևանքով: Պարզ է, վոր այս ճեղք-վածքն անդրադարձավ վողջ Միության գյուղատնտեսական արտադրության վրա: Ինքնեղ լավ էք հասկանում, վոր Հյուսիսային Կովկասի նման ապոնում (չե՞ վոր նա տալիս է բավականաչափ քանակությամբ հաց) մթերումների պլանը չկատարելն արձագանքեց վողջ Միության մեջ: Բնական է, վոր սրա հետևանքն ուժեղ անդրադարձավ այն ուսյուններում և այն վայրերի ազգաբնակչության մեջ, վորտեղ ամենից ավելի վաս էին աշխատում:

Ահա թե ինչ եմ ուզում ասել. մենք այժմ պետք է աշալուրջ կերպով յերևան հանենք, թե ինչո՞ւ Հյուսիսային Կովկասում քիչ բերք ստացվեց, զլխավորապես ցորեն: Յեթե մենք չհայտնաբերենք այդ, չմերկացնենք բոլոր հիվանդ կողմերը, ապա մենք չենք կարող բուժել, չենք կարող ամենավերջոտ անդերի վրա դնել համապատասխան սպե-



58905-67

զանի: Հենց վոր մի վորեւե վտանգ, սուր հի-
վանդութիւնն է առաջանում, բոլշեիկյան կու-
սակցութիւնն իսկույն բաց է անում հի-
վանդ կողմերը և ձգտում է ամեն կերպ
բուժել նրան:

Վոր յերկրամասում կլիմայական պայ-
մանները բոլորովին նպաստավոր կերպով
չգասավորվեցին բերքի համար—գա հնարա-
վոր բան է՝ յեթե վերցնենք յերկրամասն
ամբողջութեամբ: Բայց, ընկերներ, գերմա-
նացիների մոտ յերբ անձրևը շատ է լինում,
բերքը լավ է լինում: Ինչո՞ւ: «Յեւ, —ասում
է, ոգտագործում եմ խոնավութիւնը և դրա
համար ել ինձ մոտ բերքը լավ է լինում»
Յեթե նրա սոսա անձրևը քիչ է լինում,
նորից լավ բերք է ստացվում: Ինչո՞ւ: «Վո-
րովհետեւ, ասում է, արևը շատ էր, յես կա-
րողացա այն ոգտագործել»: Իսկ մեզանո՞ւմ:
Անձրև շատ է—բերքը վատ է, վորովհետեւ
շատ անձրև է. անձրև չի լինում—բերք չկա,
վորովհետեւ յերաշտ է: Ընկ. Սարաֆանովի
ճառը ճիշտ հայտնաբերում է, թէ ինչո՞ւ յե
այդպես:

Յեթե լինել լավ, հրաշալի յեղանակ,
հավանաբար մի հեկտարից մեկական ցենտ-
ներ բերք ստացող կոլտնտեսութիւններն էլ

առաջ քաշվեյին, նրանց դաշտերից կարող
էր ստացվել մի հեկտարին հինգ-վեց ցենտ-
ներ, իսկ կարող է պատանել նույնիսկ յոթ
ցենտներ: Իսկ այն կոլտնտեսութիւններում,
վորոնք այժմ մի հեկտարից հավաքեցին յոթ
ցենտներ, կլինել 10—12 ցենտներ: Բայց
դուք գիտեք, վոր լավ յեղանակը, զա հա-
վասար է վիճակախաղի շահումներին: Եա-
հումները շատ քիչ դեպքերում են ընկնում:
Այդպես է նաև լավ յեղանակը: Պարզ է,
վոր ինչքան ավելի անբարենպաստ է յեղա-
նակը, այնքան ավելի խոշոր է լինում տար-
բերութիւնը լավ մշակված հողից և վատ
մշակված հողից ստացվող բերքերի միջև:
Հողը լավ մշակելու, հողի հանգեպ ուշադիր
վերաբերմունք ցույց տալու դեպքում, նույն-
իսկ կլիմայական պայմանների տեսակե-
տից բոլորովին աննպաստ տարում բերքը
յեթե միջակ էլ չլինի, համենայն դեպս դրա
չափ կլինի և այդ դեպքում հեշտութեամբ
կարելի յե կատարել պետութեան հանդեպ
ունեցած պարտավորութիւնները—հացա-
մթերումների պլանը, ամբարել սերմացուն
և մնացածը պահել իրեն:

Սակայն ինչքան վատ լինի տարին, այն-
քան ավելի խոշոր է լինում վատ կոլտնտե-

առեթյան և լավ կոյտնատեսության բերքա-
տուության միջև յեղած տարբերությունը՝
վատ ղեկավարության և լավ ղեկավարու-
թյան գեպքում: Անցյալ տարի պարզվեց,
վոր Հյուսիսային Կովկասում գգալի չտնօր
լավ կոյտնատեսություններ լինելով հանգերձ
(իսկ չե՞ վոր Հյուսիսային Կովկասի ամբողջ
տերրիտորիայում կան լավ կոյտնատեսու-
թյուններ—և Կուբանում և Դոնշչինում,
նրանք գոյութուն ունեն յերկրամասի բո-
լոր տեղերում), կան 20, յեթե վոչ 25 առկու
վատ կոյտնատեսություններ, վորոնք ունեն
վատ ղեկավարություն:

Սակայն սա դեռ բոլորը չե, բանը նրա-
նումն է, վոր մենք ձեռքից բաց թողինք
(իսկ յես կարծում եմ, վոր առաջին հերթին
յես ձեռքից բաց թողեցի ձեր անցյալ համա-
գումարում, ուղղակի չեմ կարող ինձ ներել,
յես ձեզ չափից ավելի հավատացի) (լուսիկ-
նում բարձրալուսում է ծիծաղ): մենք գիտենք
կոլեկտիվացման, կոլեկտիվ կյանքի գծվա-
րությունները, մենք գիտենք, թե ինչքան
դժվար է կազմակերպվածորեն ընդգրկել
Հյուսիսային Կովկասի կոյտնատեսային վիթ-
խարի ցանքատարածությունները: Այս դժ-
վարությունները մեզ համար հասկանալի

են: Յեթե հենց վոր նկատելինք մեր ըն-
կերների, մեր կոյտնատեսությունների և
նրանց ղեկավարների գլխակորուսությունը,
մի քանի կոյտնատեսականների անվուխու-
թյունն ու ծուլությունը, ապա այդ բոլորի
համար հարկավոր եր պատժել: Պետական
չինարարության մեջ, յերբ պետության բո-
լոր ջղերը լարված են, Սորհրդային Միու-
թյան տնտեսության մի մասը կազմող կո-
լեկտիվ տնտեսության մեջ ծուլու-
թյունն ու անհոգությունն ամենախիստ դա-
տապարտության են արժանի: Բայց չե՞ վոր
բանը միայն գլխակորուսության, ծուլու-
թյան և անհոգության մեջ չի կայանում:
Մի ամբողջ շարք կոյտնատեսություններում
մենք տեսանք, վոր վատ տնտեսավարու-
թյունը, գլխակորուսությունը, այդ կոյտն-
ատեսությունները դեպի քայքայում տանող
անհանդուրժելի աշխատանքին մասնակցում
և գործում էին այնպիսի անձնավորու-
թյուններ, վորոնք ունեյին վորոշ նպա-
տակներ, այնպիսի անձնավորություններ,
վորոնք կոյտնատեսությունների քայքայման,
կոյտնատեսային դաշտերի անբերրության
մեջ հետապնդում էին քաղաքական նպա-
տակներ, այս անձնավորություններն առ-

խաճեցին բարդացնել, արգելակել, խանգարել սոցիալխոսական շինարարությունը, այս դասակարգային թեմամիները հեճապնեցին Խորհրդային պետության առաջընթաց շարժմանն արգելի լինելու նպատակը չեղ այս նպատակով նրանք կանգնեցին խորհրդային իշխանության դեմ ուղղակի պայքարելու ուղիի վրա:

Դուք գիտեք, վոր դասակարգային թրջնամիները խորհրդային իշխանութեան դեմ զանազան ձեերով են պայքարում: Յերբ յերկու տարբեր բանակները կոչում են, նրանք անպայման իրար չեն հանդիպում միայն ճակատային հարձակման ժամանակ: Ընկեր Ստալինն իր «գլուղում տարվող աշխատանքի մասին» արտասանած ճառում բաց արեց քաղաքական պայքարի այն նոր տակտիկան, վորով ոգտվում է կուլակը: Հյուսիսային կովկասի ստանիցաներում և մանավանդ Կուբանում, մենք հանդիպեցինք նույն այդ պայքարի զանազան միջոցներին, վորն (պայքարը) այստեղ ամենասուր ձևերը ընդունեց:

Ինչո՞ւ համար Կուբանում այս թշնամիներն ավելի շատ են, քան Խորհրդային Միութեան տերրիտորիայի մյուս մասերում:

Մեզ համար, իհարկե, հասկանալի չէ: Կուբանի ազնիվ կոլանտեսականի համար այս խնդրում զարմանալի և սարսափելի վոշինչ չկա: Մենք գիտենք, վոր Կուբանում հին հողատերեր և ցարիզմի հին ամենահավատարիմ ծառաներ շատ կան: Այս մարդիկ հասկանում են, վոր կոլսնեստային իրավակարգի ամրացումը չեղ, մանավանդ, կոլսնեստությունների կազմակերպչական-սնեստական ամրապնդումը, վորն անց են կացնում կոլսնեստականները կուսակցության չեղ խորհրդային կառավարության ղեկավարությունը, որեց-որ ավելի չեղն հեռացնում է հնին վերադառնալու հույսը: Իսկ չե՞ վոր այս գաղափարի—հնին վերադառնալու հույսը—նրանցից վազ չի գալիս: Նրա մասին նրանց հիշեցնում են արտասանմանի սպիտակ-գվարդիականներն իրենց նամակներում և թերթերում: Յեղ անա այստեղ անդի ունեցավ խորհրդային պետութեան թշնամիների հարձակումը,—հարձակում ճակատամարտից մեկում,—յեթե կարելի չէ այսպես արտահայտվել, ամենանուրբ ճակատամատում—կոլանտեսային ճակատամատում:

Թշնամին մեզ այստեղ մարտի հրավերեց:

Այստեղ թագցնելու, քողարկելու վոչինչ
չկա: Պետք է անկեղծորեն ասենք, վոր դա-
սակարգային թշնամին կոլտնտեսականների
կողմից չհանդիպեց այնպիսի դիմադրու-
թյան, վորպիսին հարկավոր եր ցույց տալ
նրան տվյալ մոմենտում: Թշնամին չհան-
դիպեց այն դիմադրութեանը, վոր 1919
թվին հակահեղափոխական կազակները հան-
դիպեցին կազակ յերիտասարդութեան, յեկ-
վոր ազգաբնակչութեան կողմից: Դուք ան-
շուշտ հիշում եք, թե ինչպես 1918 թվին
վորդին կռվում եր հոր դեմ, հայրը վորդու
դեմ: Այսպես անա ցարիզմի սպասավորները
կոլտնտեսականների կողմից հարկ յեղած
դիմադրութեանը չհանդիպեցին:

Հասկանալի յե, վոր տվյալ մոմենտում
պայքարն այլ ձևեր ընդունեց, քան 1919
թվին: Թշնամին չի փորձում խորհրդային
իշխանութիւնը զինված ձեռքով տասպալել:
Նա պայքարն ուրիշ յեղանակով է տանում:
Նա կոլտնտեսականներին լարում է պետու-
թեան դեմ: «Պետութիւնը, — ասում է նա, —
ձեզանից շատ է վերցնում. դուք քիչ ցանե-
ցեք, վորպեսզի միայն ձեզ բավականանա:
Դունք ինչո՞ւ պիտի շատ ցանեք, մեկ է, բոլ-
շեիկները կուտեն»:

Մի՞թե սա գյուղացիական տեսակետ է:
Մի՞թե սա կոլտնտեսային տեսակետ է: Մի-
թե նա, ով քարոզում է այս — կոլտնտեսա-
կան է, գյուղացի յե: Կարող է պատահել,
վոր նրանցից վոմանք պետութեան զիտակից
թշնամիներ չեն հանդիսանում, բայց վոր
նրանք հակահեղափոխական գաղափար են
քարոզում, վոր չափազանց թշնամական
գործ են կատարում Խորհրդային Միութեան
բանվորների և գյուղացիների հանդեպ, —
գրանում վոչ մի կասկած չի կարող լինել:
Սակայն կոլտնտեսականներից շատերն ի՞նչ-
պես եյին նայում այսպիսի քարոզների վրա:
Ինչո՞ւ համար նրանք լսում եյին: Նրանք մը-
տածում եյին — չէ՞ վոր դա յես չեմ ասում,
յես ազնիվ մարդ եմ, խորհրդային, բարե-
խղճորեն եմ աշխատում: Նրանք, ընկերներ,
իրենց լուութեամբ ուղեկցեցին թշնամուն
և հենց դրանով կուլակային քարոզին մաս-
նակիցներ դարձան: Յեթե դուք ինքներդ
ձեզ ուշի-ուշով ստուգելու լինեք, ապա
կտեսնեք, թե ձեզանից քանիսն են ուղեկցել
և վորոշ չափով մասնակիցներ են յեղել և
վորոնք յերբեմն ակամայից, անզիտակցա-
բար, բայց համենայն դեպս աննուղղակի
ոգնել են թշնամիներին:

Պետք է ասեմ, վոր յես բոլորովին համաձայն եմ ընկ. Սարաֆանովի հետ, վոր Հյուսիսային Կովկասի մի շարք ռայոնական աշխատողներն անպայման իրենց կոչման բարձրութեան վրա կանգնած չեն յեղեր: Այստեղ նա ձեզ որինակներ բերեց, թե ինչպես իր արտերն եյին գալիս ռայոնական աշխատողներ և ստիպում եյին ցանել չվարած հողում: Ինչպես գիտեք, կուսակցութեանն ու կառավարութեանն խստիվ պատժում են այսպիսի «ղեկավարութեանը»: Միանգամայն հասկանալի յես, վոր ռայոնը պարտավոր է ամեն կերպ աշխատելու, վորպեսզի յուրաքանչյուր կուլանտեսութեան լրիվ կատարի պլանային առաջադրութեանները: Բայց դա չի նշանակում, վոր պլանի ձևական և թղթային կատարման համար կարելի յես կուլանտեսութեանն ստիպել ցանելու չվարած հողում, վորպեսզի հետագայում ցորենի փոխարեն նրա վրա բանի Ֆիլկինի գրութեան:

Հանդուրժելի՞ յես արդյոք այսպիսի գրութեան:

Իհարկե, անհանդուրժելի յես:

Սակայն պատահական չե, վոր յերկրամասի մի քանի ռայոնների գեկավարութեան

նր այսպես եր տանում իր աշխատանքը: Պետք է ուղղակի ասել, վոր այս ռայոններում տեղ-տեղ և դեռ մինչև հիմա յել գործադրվում են աշխատանքի այնպիսի մեթոդներ, վորոնք կիրառվում եյին համատարած կուլեկտիվացումից առաջ: Չե՞ վոր կուլեկտիվացումից առաջ անհատական տնտեսութեան մեջ գյուղատնտեսական արտադրութեան վորակը հարյուր անգամ ավելի քիչ ուշադրութեան եր առնվում մեր իշխանութեան մարմինների կողմից, քան թե այժմ: Սակայն գեկավարութեան այս հին մեթոդը — դե՞ յես պարտավոր եմ միայն կատարելու հացամթերման պլանը և պատասխանատու չեմ հողի մշակման համար, — այս մեթոդը, ռայոնական աշխատողների այս տրամադրութեանները դեռ ևս մինչև այժմ պահպանվել են: Յես ինքս զգում եմ դա և գիտեմ կուլանտեսականների զանգատների միջոցով:

Այժմ գյուղում բոլորովին այլ է դրութեանը: Կուլանտեսութեանը բարդ տնտեսութեան է: Նրա գեկավարները մեծ մասամբ հանդիսանում են իրենք՝ գյուղացիները, վորոնք նույնիսկ հողն առատ լինելով հանդերձ, իրենց անհատական տնտեսութեան մեջ 10—15 դեսիատինից ավելի չե-

յին մշակում: Այսպիսի անտեսութիւննից
դեպի հազարավոր հեկտարանոց անտեսու-
թյան զեկավարում ցատկելը դժվար գործ
է: Պարզ է, վոր մի նախագահին շատ դժ-
վար է զեկավարել կոլանտեսութիւնը: Կու-
սակցութեան ապկումի քարտուղարը, ուս-
գործկումի նախագահը, ռայհողբաժնի վարիչը—
անա այն յերեք զեմքերը, վորոնք պետք է
պատասխանատու լինեն ամեն ինչի համար,
իմանան, թէ ինչո՞վ է շնչում կոլանտեսու-
թիւնը, ինչպիսի ակտիվ ունի կոլանտեսու-
թիւնը և նրանք պետք է պահպանեն այդ
կոլանտեսային ակտիվին: Սակայն, այս ու-
յոնական կազմակերպութիւնները կատա-
րում են արդէոք, յեթէ վոչ հարյուր, այլ
գոնե 50 տոկոսով այն պահանջները, վո-
րոնք այժմ անհրաժեշտ են՝ կոլանտեսու-
թիւնները զեկավարելու համար: Մինչև
այժմ չեն կատարել: Մենք պետք է այդ
ասեւք բացարձակ կերպով—չկատարեցին և
անա այժմ դուք ստիպված եք հաշիվ տես-
նելու դրա համար:

Այն զեպքերը, վորոնք տեղի ունեցան է
տեղի յեն ունենում Հյուսիսային Կովկա-
սում, տվեցին իրենց հետևանքները, իրենց
արդյունքները: Յերբ ուսյոնական աշխա-

տողները պատժվում են,—խակ նրանց՝ իշ-
խանութիւնը բավականաչափ պատժում է,
կարող է պատահել, վոր պատժողներին
թվում կան լավ մարդիկ և մարդկայնորեն
գատելով՝ մեղք են նրանք, բայց յես կար-
ծում եմ, վոր, յեթէ կարելի յէ այսպես
արտահայտվել, ուսյոնական զեկավարու-
թիւնը հասցվող հարվածը միանգամայն
տեղին է:

Յես մեղմ մարդ եմ, համարվում եմ
վերին աստիճանի մեղմ մարդ և չեմ սիրում
խիստ միջոցներ (ծիծալ, ծափահարություն-
ներ), բայց, ընկերներ, պետք եր մի քիչ
հարվածել և պետք եր յերեսով զեպի կոլ-
անտեսութիւնը զառնար Այս ել հենց կոչ-
վում է խիական շրջադարձ յերեսով զեպի
կոլանտեսութիւնը (ծափահարություններ):
Յե՛վ յերբ այժմ ընկ. Շերոլդանը իր վողջ
մարզային ապարատի, ուսյոնական ապարատի
յերեսը դարձնում է զեպի կոլանտեսութիւ-
նը, յես դա համարում եմ ամենալավ շրջա-
դարձ: Դրանից լավ արդյունքներ պետք է
ստացվեն: Եյապես խորհրդային իշխանու-
թյան ուժը կայանում է հենց նրանում, վոր
մենք միշտ կարողանում ենք յուրաքան-
չյուր դժվար շրջութիւնն ոգտագործել՝ մաս-

89-50485



սաներին մորբիլիզացիայի յենթարկելու, կադրերն ստուգելու և նոր ակտիվ առաջ քաշելու համար: Բուրժուական կառավարութեան համար ծանր է դրութեանը—թուլանում է կառավարութեանը. իսկ խորհրդային իշխանութեանը նրան պնդացնում և ամրացնում է (ծափահարութիւններ): Ահա ինչու՞ն է ուժը (ծափահարութիւններ):

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԵԿՎԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԸ ԴԵՌ ԹՈՒՅԼ Ե

Գյուղատնտեսական արտադրութեան ընդհանուր պլանում խորհանտեսութեանը Հյուսիսային Կովկասում շատ մեծ նշանակութիւն ունեն: Սակայն յես պետք է ասեմ, վոր նրանց ղեկավարումը նույնպես թույլ է: Դրա համար ել ղեկի խորհանտեսութեաններն յեղած ուշադրութեանը բազմաթիվ անգամ պետք է ուժեղացվի:

Բերքը նորմալ լինելու ղեպքում, խորհանտեսութեանները յերկրամասում պիտի տան 35 միլիոն փութ հացահատիկ: Իրենց պլանը նրանք առայժմ չեն կատարում: Յեթե նրանք տան իրենց 35 միլիոն փութը, այն ժամանակ լավ կլինի նաև յերկրամասի կոլտնտեսութեանների համար, վորովհետև հացի

արտադրութեան բարձրացման համապատասխան, խորհանտեսութեաններում ուղղվում է յերկրամասի ապրանքային հացահատիկի հաշվեկշիռը: Յես հասկանում եմ խորհանտեսութեանները ղեկավարելու ղեկավարութեանները, բայց և այնպես, ընկերներ, մենք մոտեցել ենք այն ղծին, յերբ պարտավոր ենք խորհանտեսութեանները ղեկավարներից պահանջելու, վորպեսզի նրանք իսկապես տիրապետեն խորհանտեսային տնտեսութեանը:

Հյուսիսային Կովկասում խոշոր աշխատանք է կատարված յերկրորդ Ուսումնական խորհանտեսութեան մեջ, բայց այդ աշխատանքը կատարված է միակողմանի: Այդ միակողմանիութեանը կայանում է նրանում, վոր մարդիկ մեքենայով հափշտակվել են և մոռացել են հողի մասին, ազրոնումիայի մասին: Կասկած չկա, վոր 5—10 տարուց հետո մեքենան իշխելու յե Հյուսիսային Կովկասի տափաստաններում, բայց նա յել հենց պահանջում է ազրոնումիական խոշոր միջոցառումներ: Չե՞ վոր մեզ մոտ տնտեսութեանը նման չե Հյուսիսային Ամերիկայի տնտեսութեաններին, վորտեղ միայն շահ են փնտռում: Ամերիկայում հացա-

հատիկային տնտեսութիւնը տարվում է գիշատիչ ձևով, բոլորովին հաշվի չառնելով հողի ուժասպառութիւնը. չնգալով վաղվա մասին:

Մեզանում, ընկերներ, սոցիալիստական տնտեսութիւն է, մեր տնտեսութիւնը ուսցիոնալ պետք է լինի դիտական տեսակետից, ուսյոնալ պետք է լինի տեխնիկայի տեսակետից: Բացի այն տեխնիկական միջոցներից, վորոնք ոգնում են մարդուն բարձրացնելու իր արտադրողական ունակութիւնը, պետք է ծանոթ լինել նաև հողին, իմանալ նրա հետ վարվելու յեղանակը, կարողանալ մոտենալ յուրաքանչյուր հողամասին և վոչ միայն նրան մեքենաներ մատակարարել, այլ նաև պետք է գիտենալ, թե քանի՞ տարի նա կարող է ցորեն բուսցնել, ինչքան յեգիպտացորեն և այլն: Մի խոսքով յես ուզում եմ հիշեցնել, վոր անհրաժեշտ է ագրոտեխնիկայես վարել խորհրդային տնտեսութիւնը:

Պատահական չէ, վոր մեր խորհանտեսութիւնների բերքը վոչ միայն ցածր է, այլ նաև վերին աստիճանի խայտարղետ: Այստեղ եք անա գուք, կոլտնտեսականներդ, այստեղ է նաև մարգային և կոլտնտեսային

ակտիվը, և այստեղ ընկ. Շեբուղանի առաջ հարց պետք է դնել, թե արդյոք խորհանտեսային վարչութիւնը յերբեվիցե ուղարկել է նրան գեթ մի գեկուցագիր՝ խորհանտեսային դաշտերի բերքատվութիւնը բարձրացնելու, բերքն առտտ և մշտական դարձնելու հարցերի մասին: Յերևակայեցեք, վոր վոչ: Յես վստահ եմ, վոր խորհանտեսութիւն բոլոր աշխատողները պլաններով, հերթական գյուղատնտեսական կամպանիաներով են զբաղված: Սա պետքական, կարևոր գործ է: Գարնանացանի կամպանիան է, ինչպես կարելի յե չանցկացնել այն: Բայց նրա հետ միաժամանակ մենք չպետք է մոռանանք, որինակի համար, խորհանտեսութիւններում բոլոր ջրափոսերի շուրջը փայտեր տնկելու անհրաժեշտութիւն մասին: Ինչո՞ւ համար խորհանտեսութիւնը չի կարող այս անել:

Անցկացնելով ընթացիկ ցանքը, աշխատանքի սիստեմի մեջ պետք է մացնել նաև հետագա տարիների բերքը ժամանակին նախապատրաստելու գործը: Յեթե մենք նախապես բերքը չնախապատրաստենք, ապա մենք միշտ գուշակելու յենք, թե արդյոք բերքը լինելո՞ւ յե, թե վոչ:

Խոսելով խորհանտեսությունների մասին, յես պետք է մատնանշեմ խորհանտեսություններին և ռայոնական ղեկավարութեան միջև տեղի ունեցող փոքր ընդհարումները: Որինակ ռայոնների կարիքների համար մեքենաներ ոգտագործելը, մարդկանց մոբիլիզացիայի յենթարկելը՝ առանց կարեւորութեան ապու խորհանտեսութեան դիրեկտորի բողոքներին, խորհանտեսութեան համար շատ պետքական աշխատողներին հանելը և այլն: Հարկավար է վերջ տալ սրան: Խորհանտեսություններում մենք հանդիպում ենք և գլխակորուսութեան, և վարչութեան մարմինների անհոգութեան և նույնիսկ մնասարարութեան:

Յես կարծում եմ, վոր Հյուսիսային Կովկասը, վորտեղ կենտրոնացած են հսկայական սարածուրյամբ խորհանտեսային հողեր, համալիութեանական մասշտաբով ցույց պետք է տա որինակ, հայցնաբերի նախաձեռնություն՝ կուլտուրական-գիտական աշխատանքը ծավալելու, խորհանտեսութեան մասիվներում բերքը կազմակերպելու, նախապատասխանելու յե՛վ բերքի կանոնավորությունն ապահովելու գործում:

ԿՈՆՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ՄԻՋԱԿ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՐՁՆԵԼ ՈՒՆԵՎՈՐՆԵՐ

Կանգ եմ առնում ևս մի չափազանց կարևոր հարցի վրա: Դուք գիտեք, վոր ընկ. Ստալինը զրեց բոլոր կոլտնտեսականներին միջակ դրությունից ունեւորներ դարձնելու հարցը: Չէ վոր արդեն այժմ լավ աշխատող կոլտնտեսութեան անդամները հասել են ունևոր գյուղացու մակարդակին, վորպիսին յեղել էր նա անհատական տնտեսութեան պայմաններում: Ընկ. Ստալինն ասել է. «հասել է ժամանակը՝ բոլոր կոլտնտեսականներին անցնելու ունևորների դրութեանը: Յես կարծում եմ, վոր դա հնարավոր է և պետք է հասնել զրան ամենակարճ ժամանակամիջոցում: Կոլտնտեսականների և տեղական կազմակերպությունների ղեկավար ընկերներ, զրա համար այժմ արդեն բոլոր հնարավորությունները կան: Մենք գտնվում ենք շատ նպաստավոր պայմաններում: Չի բավականանում միայն քիչ-շատ որինամօր տնտեսութեան կազմակերպում և կոլտնտեսությունների ամուր կազմակերպչական-տնտեսական ղեկավարություն»:

Իբրև որինակ եմ վերցնում իմ ծննդավայրում գտնվող և ինձ մտաբի կոլտնտեսությունը: Ինձ առաջ թվում էր, թե զբժվար կլինի նրան այնպես կազմակերպել, վոր զգալի չափով հաջողվի բարձրացնել իմ համադյուղացիների նյութական դրուժյունը: Իմ գյուղում կա ընդամենը 300 դեսյատին դաշտ և մի բակին ընկնում է 1-ից մինչև 2^{1/2} դեսյատին: Հողի սակավության պատճառով չափահասների զգալի մասը գնում է քաղաք՝ զրոսի արհեստով զբաղվելու, սակայն կոլտնտեսությունն անա գոյություն ունի և վաս չի աշխատում: Յես նույնպես կոլտնտեսության անդամ եմ, քանի վոր այդ գյուղում յես ունեյի տուն և ձի (ժափահարություններ): Իհարկե, այդ բոլորն ինձանից վերցրին և դարձրին կոլտնտեսության սեփականություն, «թալանեցին», ինչպես կարգն է: (Միժալ): Յես, ընկերներ, ուշադրությամբ հետևում եմ կոլտնտեսության կյանքին, ոգնում եմ նրան՝ իհարկե վոչ թե փողով, քանի վոր վողորմությունները կոլտնտեսության ոգուտ չեն ապրի: Յեվ կարծում եմ, վոր փողով ոգնելը փչացնում է մարդկանց (ժափահարություններ): Այժմ յես կարող եմ հայտնել մեր կոլտնտեսու-

թյան աշխատանքի արդյունքները: Վերջին յերեք տարվա ընթացքում միջին բերքը կայուն է յեղել. մի հեկտարից հաճարը տվել է 102 փութ, վարսակը—95 փութ: Էերբբ վաս չէ: Այսպիսի բերքատվություն անուձին տնտեսատերերը առաջն էլ ունեյին: Սակայն միջին հաշվով գյուղում այսպիսի բերք յերբեք չի յեղել: Առաջ գյուղում կար վոչ ավելի, քան մեկ-յերկու խոճկոր: Այժմ համարյա ամեն մի տուն ունի խոճկոր: Կոլտնտեսության Ֆերման նրանց մատղաշներ է հայթայթում: Վերցնենք յեկամուտը: Այխորվա յեկամուտը հիմա 1 ու 70 կոպեկ է, վորից 60 տոկոսը բնամթերքով է: Բացի զրանից, կոլտնտեսությունը և կոլտնտեսականներն ունեն բավականաչափ յեկամուտ կողմնակի զբաղմունքներից, կապալային աշխատանքներից, բեռնակրությունից և այլն: Յեթե այս բոլորը հաշվի առնենք, ապա անհատական տնտեսության համեմատությամբ, կոլտնտեսության յեկամուտն առնվազն 40 տոկոսով բարձր է: Առաջ հացը յերբեք չէր բավականանում: Այս տարի մենք պետությանը ավինք 16 ցենտներ: Առաջ ամբողջ գյուղը ծախում էր ընդամենը 40-ից մինչև 100 փութ վուշ: Այս տարի պետու-

թյանը հանձնեցինք 74 ցենտներ: Առաջ
վուշի սերմը միշտ գնում էյինք, իսկ հիմա
մենք թե սերմացու ունենք և թե պասվա
յուղ: Կարտոֆիլը նույնպես միշտ գնում
էյինք, իսկ այս տարի պետությանը հանձ-
նեցինք 5000 փթից ավելի կարտոֆիլ (ճա-
փահարու քյունկեր): Յերբ յես մոտերս գյուղ
մեկնեցի, հարցրի. «Ի՞նչպես ե ձեր զրու-
թյունը, հացի պաշար ունե՞ք, թե վոչ»:
Պատասխանում են.— «20 ցենտներ ունենք»:
Իուք գիտեք, վոր Մոսկվայի մարզը կա-
տարեց հացամթերման պլանը և դրա հա-
մար էլ ունի հաց վաճառելու արտոնություն:
Մոսկվայի կոոպերացիան ստացավ առա-
ջագրանք—գնել դյուղացիներից 3 միլիոն
փութ հացահատիկ: Յես ասում եմ մեր կո-
ոպեսակախներին.— «ձեր 20 ցենտները հանձ-
նեցեք կոոպերացիային»:— «Իսկ ի՞նչ արժե-
քով»:— «Գինն, իհարկե, նույնն է, ինչ հա-
ցահանձնման ժամանակ—փութը 90 կոպե-
կից մինչև 1 ուրբլի: Կոլանտեսությունը
տվեց այդ 20 ցենտները, վորը բազմապատ-
կած վեցով, ստացվում է 120 փութ, նշա-
նակում է, յեթե փութը 1 ուրբլի արժե, ապա
ընդամենը 120 ուրբլի: Մակայն դա նրանց իրա-
վունք է սալիս յուրաքանչյուր ուրբլու հա-

մար կոոպերատիվից գնելու 3 ուրբլու պա-
կասորդ ապրանք կայուն կոոպերատիվային
գնով. նշանակում է, կոլանտեսությունը կա-
յուն դներով ստանում է 360 ուրբլու ապ-
րանք: Ահա յես ձեզ հարցնում եմ— ձեռն-
տու յե սա, թե վոչ: Բանից դուրս է գա-
լիս, վոր սա շատ ձեռնտու յե:

Առաջ, նախ քան կոլեկտիվացումը, մեզ
մոտ չքավորություն էր: Ծիշտ է, մեր կող-
մերում առողջ մարդը չեր կարող չքավոր
համարվել, նա միշտ կարող էր աշխատանք
գտնել: Մակայն քիչ չեյին յերեխաներով
այրի կանայք կամ պարզապես, այսպես
ասած, ասածուց պատժված մարդիկ (ծի-
ժալ): Իսկ այժմ մեզ մոտ չքավորու-
թյուն բոլորովին չկա: Յերբ քո գյուղումն
ես լինում, բոլորին լավ ես ճանաչում: Գի-
տես, թե նրանք առաջ ինչպես էյին աշխա-
տում և ապրում: Մի անգամ յես գնում եմ
մի գեղջկուհու մոտ և հարցնում. «Ինչպես
ես ապրում դու»: Առաջ նա աշխատում էր
դյուղացիների մոտ, դաշտային աշխատանք-
ներ էր կատարում, իսկ ամբողջ ձմեռը վո-
ղորմություն էր հավաքում: Զե՞ վոր մեզ
մոտ ամռանը շատ չես վաստակում: Մեր
կողմերը կուբանի նման չեն, յերեք

որ աշխատեցիր թե չե, ամեն ինչ արգեն հավաքված ե: Մի ամիս կերար, այնուհետև ել բան չի մնում ուտելու: Իսկ հիմա նա կոլտնտեսութունից թե հաց ե ստանում և թե կաթ: Յես հարցնում եմ նրան. «Իսրիս, դու ի՞նչպես ես ապրում»: (Յես գիտեմ, վոր նա այժմ անհամեմատ ավելի լավ ե ապրում, քան առաջ): Նա պատասխանում ե. — «Մեր բանը միևնույնն ե, ինչպես առաջ, այնպես ել այժմ՝ խորհրդային իշխանության ժամանակ: Առաջ ել եյինք աշխատում, հիմա յել տարբերությունը միայն նրանումն ե, վոր այժմ մեր տերը մենք ենք»: Իսկ յես գիտեմ, վոր նա 3—5 անգամ ավելի լավ ե ապրում: Յես ուշի-ուշով հետևում եմ այս կոլտնտեսության աշխատանքին: Յես հետեվում եմ, վորպեսզի նրանք նախ և առաջ հանձնեն պետական պարտքը, կատարեն պետության հանդեպ ունեցած պարտավորությունները (ծափախարություններ): Իսկ զրա հետ մեկ տեղ, նրանց հիմնական կապիտալներն ավելանում են. կազմակերպված են կաթնաապրանքային ֆերմաներ և այլն: Ընկերներ, յես նրանց սովորեցնում եմ դառնալ սոցիալիստական հատաճակության իսկական կառուցողներ: Այս-

պես անա, ընկերներ, այս որինակը, ինչպես յերկու անգամ յերկու — շորս, ցույց ե տալիս, վոր նույնիսկ այսպիսի կոլտնտեսություն, վորի մասին յես հենց-հիմա խոսեցի, վորը բավականաչափ վատ պայմաններումն ե գտնվում, քան Հյուսիսային կովկասի կոլտնտեսությունները, — հնարավորություն ե սալիս 40 տկոսով յեվ նույնիսկ ավելի լավացնելու դրություներ. յավացնելու դրություներ՝ ժամանակակից գածիներեի, մեայժկան զարգացման, ներկա կազմակերպչական ու նսկությունների պայմաններում:

Այժմ ել կոլտնտեսություններում ել ավելի ուշագրավ ե այն հանգամանքը, վոր այնտեղ առաջ յեկան կոլտնտեսային շինարարության իսկական սիրահարներ, և գլխավոր սիրահարները կանայքն են: Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ կան տասնյակ կանայք, վորոնք կոկորդ են պատում կոլտնտեսության համար: Իմ անձնական փորձով տեսնում եմ, վոր կանայք կոլտնտեսությունների և նրանց ամբացման լավագույն պաշտպաններ են հանդիսանում: Սա բնական ե: Չի կարելի մոռանալ, վոր կոլտնտեսությունն ազատում ե կնոջ առօրյա մանր, տնային մոայլ գրազմունքից: Կերակուր

յեփեղը, տուն. տեղ հավաքելը, լվացքը, յերե-
խանների խնամքը և այլն. այս հազար ու
մի մանր տնային գործերը հարյուրավոր
տարիներ կնոջը ստրուկ եյին դարձրել: Այս
առօրյա մանր գործերը կլանում եյին նրա
ամբողջ ժամանակը, նա որ ու գիշեր վատ-
նում եր զբանց համար և յերբեք չէր կա-
րողանում կարգի գցել նրանց: Այս տնա-
յին պայմանները սահմանափակում եյին
նրա մտավոր հորիզոնը, բթացնում եյին նը-
քան, զրկում եյին կնոջ տղամարդու հետ
հավասար իրավունքներով ոգավելու հնա-
քավորությունից, թույլ չեյին աալիս նրան
տղամարդուն հավասար մասնակցելու
սոցիալիստական շինարարությանը, ինչպես
նաև յերկրի քաղաքական կյանքին: Կոյսնի-
սեստությունների գարգացումն առաջին հեր-
թին բավականաչափ ազատում է գեղջկու-
հուն աշղ մանր հոգսերից յեվ զրա համար
եղ միանգամայն բնական է. վոր գեղջկու-
հիների միջեվ մենք գնում ենք կոյսնի-
ստությունների ուժեղ պաշտպաններ:

Այսպիսով, բնկերեն, յեթ մենք կարո-
ղանանք քիչ-շատ կարփին ղեկավարել կոյ-
սնեստությունները, ապա լիովին ապահո-
ված կլինենք կոյսնեստականների բարեկե-

ցությունը առկվազն 40% բարձրացնելու
գործը: Մա ստուգված է կոլտնտեսային շի-
նարարության հսկայական փորձով. սա
հաստատվում է Սորհրդային Միության հա-
զարավոր կոլտնտեսությունների կողմից:
Այստեղ մենք պարտավոր ենք, «թեկուզ գը-
լուխներս ջարդելու լինենք», վողջ Միության
մեջ զյուղատնտեսությունը բարձրացնել⁴⁰ %:
Յեվ սա կլինի այն պայմանը, վոր հնարա-
վորություն է տալիս տնտեսապես բավա-
կանաչափ ապահովելու Սորհրդային Միու-
թյան վողջ ազգաբնակչությունը. սբանով
մենք լիովին կհաղթահարենք զժվարություն-
ները և այն ժամանակ ել վոչ գրքույկ, ել
վոչ մի նորմա պետք չի լինելու: Մի խոս-
քով, այն ժամանակ իսկապես վոր ամեն
մի մարդ ել ավելի կուշա կլինի, իսկ
զուք գիտեք, ընկերներ, վոր աշխար-
հումս չկա և չի յեղել գեռ մի յերկիր, ուր
մարդիկ լիովին կուշա լինեյին: Աշխարհումըս
այսպիսի յերկրներ չկան: Վերցրեք կապիտա-
լիստական յերկրներից ամենահարուստը—
Ամերիկան: Ամերիկայում վոմանք, հասա-
բակության փոքրաթիվ մասը վորկրամոլու-
թյան չափ ուտում և այնուհետև գնում
կուրորտները բժշկելու իր ճարպակալու-

թյունը, իսկ մյուս կողմից, հենց նույն Ա-
մերիկայում կան միլիոնավոր մարդիկ, վո-
րոնք միշտ կիսաքաղց են: Իսկ մենք միակ
յերկիրն ենք—սոցիալիզմ կառուցող յերկի-
րը, վորը կարող է լիովին կերակրել բոլորին:
Իրա համար ել հարկավոր է, ինչ ել լինի,
այնպես անել, վոր կոլանտեսություններն
ամրապես վտարի կանգնեն, վոր. կազմակերպ-
չսրեն ամրանալով, տան այն արդյունք-
ները, վորոնք անհրաժեշտ են Խորհրդային
Միության աշխատավորության համար: Սա
կարելի յե անել, սրա համար քիչ բան է
հարկավոր. հագ տանել կոլանտեսային բա-
րիքի մասին, հավատարիմ լինել, գիտակ-
ցել իր և համապետական շահերը և ցանկա-
նալ իր գրությունը լավացնելու: Գյուղացու
նամար սրկուքյունից յեվ չհավորությունից
դուրս գալու ուրիշ նաևապարհներ չկան՝
բացի կոլսնեստությունից յեվ բարեխիղճ
ու ազնիվ կոլսնեստային աշխատանքից:
Միայն կոլանտեսություններն են, վոր պո-
յետարիատի ղեկավարությամբ կապահովեն
աշխատավորների լիակատար նյութական
բարեկեցությունը:

Այժմ, ընկերներ, հարկավոր է մի հարց
ես գնել. կարո՞ղ է արդյոք Հյուսիսային

կովկասի գյուղացրությունը, կատարելով
պետական բոլոր պարտավորությունները,
ունևոր դառնար Յես կարծում եմ, վոր իր
բոլոր պահանջները լիովին բավարարելու,
պետական պարտավորությունները ամենա-
բարեխիղճ կերպով կատարելու ղեպքում—
կարող է: Յեվ իսկպես, յեկեք հաշվենք:
Չեզ մոտ ահա մոտակա տարիներում ցան-
վելու յե մոտավորապես տաս միլիոն հեկ-
տար հացահատիկ (չեմ խոսելու բոլոր մնա-
ցածների մասին): Այս տաս միլիոն հեկտար
հողից դուք պետությանը պիտի հանձնեք
150 միլիոն փութ: Այսպիսով հեկտարից
15 փութ: Միթե, ընկերներ, Խորհրդային
Միության ամենալավ հողերի մի հեկտարից
15 փութը շատ է: Յես կարծում եմ, վոր
դա իսկի յել շատ չէ: Իհարկե, կգտնվեն
այնպիսի «խելոքներ», վորոնք կասեն. «Իսկ
ինչո՞ւ այդ պետությունը ստիպում է գյու-
ղացիներին, վոր նրանք հացը պետության
հանձնեն, այն ել այդպիսի եժան գնով»: Իսկ
յես այդ «խելոքներին» կասեմ. իսկ դուք
վո՞րտեղ եք տեսել այնպիսի մի պետություն,
վոր հողը գյուղացիներին ձրի տա:

Յեվ իսկպես, վերցնենք թեկուզ միայն
հողը: Ինչքա՞ն արժեք մի գեսիատին

հողը Հյուսիսային Կովկասում: Յես կարծում եմ, վոր մոտավորապես 200 ուսուցիչ մի տարում, յեթե վերցնել նույնիսկ 5 տոկոս, ապա կստացվի վոսկի փողով 10 ուսուցիչ յեկամուտ: Պետութունն իրավունք ունի ձրի տրված հողի համար ստանալու 10 ուսուցիչ վոսկով միայն փորպես կապալափարձ: Իսկ մենք վերցնում ենք 15 փութ ցորեն և նրա համար վճարում ենք 20 ուսուցիչ: Հացի համար տրվող վճարը չի համարպատասխանում նրա շուկայի արժեքին, ափելի ճիշտ, սպեկուլյատիվ արժեքին, իսկ նրանցով պետութունը պահում է ուսուցիչներ, գյուղատնտեսներ և այլն: Դրա համար ել խորհրդային պետութունն աշխատավորական ուսուցիչն սպեկուլյատիվ ուսուցիչ գանազանում է հարկերի միջոցով, վոր մեկը աշխատանքով է ձեռք բերված, իսկ մյուսն ստացվել է սպեկուլյատիվ-թղթախաղի սեղանից, վերջինիս վրա զրգող հարկը տաս անգամ ավելի ուժեղ պետք է լինի: Յես, իհարկե, այս բոլորը հին ձևով եմ հաշվում: Յես հին ձևով հաշվելուն վարժված մարդ եմ (ղահլիմում ծիծաղ):

Այսպես ահա, պետութունը գյուղացիներից վերցնում հացահատիկի վորոշ մասը,

իսկ նրանք, տեսնում եք, այս բանը պետութւյան ի տես են դնում: Իսկ վոր բոլոր կալվածատերերի և կուլակների հողնանցափ կուրտատեսականներին և վոր այդ հողն այժմ պետական է և այդ հողի համար պետք եր վճարել,—այս մասին, իհարկե, նրանք մոռանում են: Այսպես ուրեմն, յես կարծում եմ, վոր մի հեկտարի համար 15 փութն իսկի յել շատ չէ, ինձ թվում է, վոր դա չափավոր է: Այստեղ, իհարկե, ձեզ պետք է դեռ պարզեմ, վոր մի հեկտարին 15 փութը — դա միջին հաշվով է: Մի ապոնում, որինակ, Դոնշչինում, վերցվելու յե 1,7 ցենտներ, մի այլ տեղում — 4 ցենտներ: Այնպես պիտի արվի, վոր յեթե մի տեղում կիսատ հավաքվի, մյուս տեղից, վորտեղ բերքը լավըն է, ավելի հավաքվի: Բայց միջին հաշվով մենք ավելի չենք վերցնում նքանցից, ինչ նշանակված է հարկի կարգով հացահատիկը պետութւյանը հանձնելու նոր սրենքի համաձայն:

Այսպես ուրեմն, յեթե հանրագումար բերեն մեր սառձները, ապա կարելի յե յեզրակացնել վոր դուք մեր ունեցած ահագին սարածությամբ հողով, հսկայական քանակությամբ քուստրներով հեկց հիմա

յել հեճուքյամբ կարող եմ 40 տոկոսով
բարձրացնել կոլսնեստուքյունների արտա-
դրողականութիւնը՝ անհասական տեսնու-
թյան հետ համեմատած: Յետ կարծում եմ,
վոր դա վոչ միայն կարելի յե՛ն ձեռք բերել,
այլ նալե՛վ պե՛տ է ձեռք բերել, յե՛վ վոչ
միայն պե՛տ է, այլ յե՛վ դա անսպասան
հարկավոր է անել:

Յետ առայժմ քննում եմ ընդհանուր
հարցերը, թեկուզ և գործնական հարցերը:
Բայց դուք իրավունք ունեք ինձ ասելու.
«Այդ բոլորը լավ է, բայց ի՛նչպես
գլուխ բերենք առաջիկա գարնանացանը»:
Հավանաբար, դուք բոլորդ մտածում եք այն
մասին, թե արդո՞ք պետութիւնը մեզ սեր-
մացու կտա՞, կոգնե՞ն նա մեզ՝ թե վոչ: Ի-
հարկե՛ն, նրա համար, վոր դուք վատ եք աշ-
խատել. ձեզ պետք է պատժել: Դա ճիշտ է:
Մենք մաքրեցինք մեր հաշիվները դասա-
կարգային թշնամիների հետ, վորո՞ք վոր-
ձում եյին վիճեցնել խորհրդային կառավա-
րութեան քաղաքականութիւնը: Շատերին
կարող է թվալ, վոր մենք անողոք գտնվե-
ցինք այդ գործում: Յերբեմն սկզբում թվում
է, թե դա իսկապես վոր անողոք եր, սա-
կայն յես ձեզ պետք է ասեմ, ընկերներ,

վոր յերբ սկզբից անողոք էս վարվում, ապա
այնուհետև զգալի չափով ավելի թեթև է
լինում: Զի կարելի թույլ տալ թշնամինե-
րին սանձարձակ դառնալ: Մեղմ ես վար-
վում, թշնամին ուժեղանում, ամբոնում է,
իսկ հետո իր ամբացրած ուժերով քեզ է
հարվածում: Իրա համար ավելի լավ է հենց
սկզբից հարվածել, ինչպես պետքն է և դը-
րանով գործը լրիվիզացիայի յենթարկել
(ժախանարտ քյուններ):

Այսպեսով ուրեմն, ընկերներ, դասակար-
գային թշնամուն մենք խփեցինք: Իսկ այժմ
չնայած նրան, վոր անցյալում դուք սխալ
գործեցիք, այնուամենայնիվ պետութիւնը
ընկ. ընկ. Շերոյգանի և կարինի միջնորդու-
թեամբ (իսկ նրանք համառ միջնորդներ ե-
ցին) ձեզ ոգնութիւն է ցույց տալիս: Կա-
ռավարութիւնը ձեզ իբրև ոգնութիւն սեր-
մացվի համար հատկացրեց 15 միլիոն փութ
(ժախանարտ քյուններ, ուռա): Իուք, ըն-
կերներ, համբերեցեք, «ուռայի» ժամանակը
չէ (ծիծաղ, ժախանարտ քյուններ): Ահա
ուրեմն, 15 միլիոն փութ սերմացվի համար,
2 միլիոն փութ պարենավորման վարկ: Իհար-
կե՛ն, գլխակորույսի համար պետք եր խելքի
բերել, բայց ինչ արած, սխալները մեր յեղ-

բայրն և արել: Պետք է ոգնել: 500 հազար
փութ վարսակ ձիու պահպանման համար և
300 հազար էլ մեր ստորին աշխատողներին
օգնելու համար, վորոնք քիչ հիմարություն-
ներ չարեցին (ծիծաղ, ծափահարությու-
ններ): Սա, ընկերներ, մեծ ոգնություն է:
Յերբ յես այս հայտարարում եմ, իհարկե,
ամենահաճելին այս է, վոր յես ձեզ ա-
սացի (դանդիկուս բարձրանում է ծածաղ):
Յես լիովին հասկանում եմ ձեզ, բայց միև-
նույն ժամանակ թույլ տվեք ձեզ ասելու
հարվածային կոչման սահմանների համա-
միութենական համազումարի կոչի բառե-
րով—դուք հիշում եք այդ կոչը: Այնտեղ
այսպիսի կետ կա. «մինչև յե՞րբ մենք ձեզ պի-
տի տանք».. հիմա այդ «մինչև յերբը» յես ձեզ
կինդրելի չմոռանալ: Այնտեղ գրված է (Տե-
ղից—նույնիսկ ավելացված է—անեկորհի-
ներին): Այո, այո, «մինչև յե՞րբ մենք ձեզ
պետք է տանք, անշնորհքներիդ»: Դուք ստա-
ցաք իբրև ոգնություն մի՞թերք, սերմացու, ու-
ներք վիթխարի տրակտորային կայաններ, ըստ
վորում ձեր տրակտորային կայանները զգալի
չափով ուժեղանում է նոր տրակտորներով,
ինչպես նաև մեծ քանակությամբ պահես-
տի մասերով: Դուք բավական հանդիմանու-

թյուն ստացաք գյուղատնտեսության վաս-
տի ոգնության համար, բավականաչափ լավ հա-
շիվ մաքրեցիք ուղղակի թշնամիների հետ,
վորոնք այս օտար գյուղում էին գտնվում:
Դուք ձեռք բերիք հիմնական հարուստ
փորձ:

Այս բոլորը միասին հույս են տալիս,
յերևակայեցեք ավելի մեծ հույս, քան անց-
յալ տարի, վոր Հյուսիսային Կովկասը
կկասարի սուսիկ կամ կանիայի գյուղա-
տնտեսական սարվա ամբողջ աշխատանք,
կկասարի այն բոլոր խնդիրները, վորոնք
կանգնած են Հյուսիսային Կովկասի առաջ,
այն բոլոր սրտավորությունները, վորոնք
դրված են նրա վրա: Յեզ կկասարի ավելի
լավ, քան նախորդ տարիներում (բունն ծա-
փահարություններ): Պատգամավորները վոտ-
քի յես կանգնում «ուռա» բացահանչու-
թյուններով: Տեղից լավում է—«խոսք ենք
տալիս կատարելու կառավարության պատ-
վերը, ուռա»: «Ընկերներ, ցանկանք ընկ-
կալինինին ապրել յերկար տարիներ: Խնդ-
րում ենք ապել ընկ. Կալինինի զեկուցումը
և տարածել վողջ Հյուսիսային Կովկասում»:
(Ծափահարություններ)



<< Ազգային գրադարան



NL0205954

30.566

Цена 20 коп.

16819

Р Е Ч Ь

10 ИЮНЬ 1933
ТОВ. М. И. Калинина

НА КРАЕВОМ СЪЕЗДЕ
КОЛХОЗНИКОВ-УДАРНИКОВ
СЕВЕРНОГО КАВКАЗА

26 февраля 1933 г.

П А Р Т И З Д А Т

РОСТОВ-ДОН 1933 г.

Ответственный по выпуску М. Гигоян.
Технический редактор М. Г. Маркарян

Сдано в набор 16/III 33 г.

Статформат № 105x148 мм

Издание № 323.

Газетно-книжная типография СККПТв Заказ 1352 Ростове нр-Дону

Подписано к печати 31/III-33 г.

Уполнрйлит № В-1100

Объем 1 1/4 печ. лист.

Тираж 20.0.